ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
13.01.2023թ. թիվ 2/11-Լ որոշման

Պալատի խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

ԿԱՄԱՎՈՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում (հաստատվում) են «Փաստաբանության մասին» օրենքով **(այսուհետ, նաև՝ Օրենքով)** սահմանված կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու հետ կապված հարաբերությունները, կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման տարեկան խրախուսելի նվազագույն ժամաքանակը և այլ չափանիշները, ներառյալ՝ փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից կազմակերպվող կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման ծրագրերի չափանիշները, կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ, նաև՝ Պալատ)** հանրային պաշտպանի գրասենյակ **(այսուհետ, նաև՝ Գրասենյակ)** դիմելու հարաբերությունները, կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ հաշվետվության ներկայացման, դրա համապատասխանությունն ստուգելու հարաբերությունները, հաշվետվությունների ներկայացման պայմանները և ձևը, սահմանված ժամաքանակով և այլ չափանիշներին համապատասխանող կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրած (ծրագրեր իրականացրած) փաստաբանների և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ցուցակի կազմման, վարման և Պալատի պաշտոնական կայքում հրապարակման հարաբերությունները, խրախուսման այլ միջոցները:

2. Սույն գլխում օգտագործվող հասկացությունները մեկնաբանվում են Օրենքով սահմանված հասկացություններին համապատասխան:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՄԱՎՈՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

3. Սույն կարգի իմաստով կամավոր անհատույց իրավաբանական օգնություն է համարվում կամավոր հիմունքներով իրավաբանական օգնության անհատույց տրամադրումն Օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խմբերի անձանց **(այսուհետ՝ Շահառու)**:

4. Կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրող անձի կողմից իր մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար անվճար ներկայացուցչություն իրականացնելը սույն կարգի իմաստով չի համարվում կամավոր անհատույց իրավաբանական օգնություն:

5. Կամավոր անհատույց իրավաբանական օգնությունը կարող են տրամադրել ինչպես փաստաբանները, այնպես էլ այլ անձինք՝ հաշվի առնելով իրավաբանական օգնություն տրամադրելու օրենսդրական սահմանափակումները:

6. Պալատը խրախուսում է իր անդամների՝ փաստաբանների, ինչպես նաև իրավապաշտպան գործունեություն իրականացնող կազմակերպությունների և այլ անհատների, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների և փաստաբանական ակադեմիայի իրավաբանական կլինիկաների ուսանողների (ունկնդիրների) կողմից հանրային իրավագիտակցության բարձրացմանը միտված ծրագրերի և աշխատանքների իրականացումը, այդ թվում՝ կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը:

7. Պալատի անդամ հանդիսացող յուրաքանչյուր փաստաբան, ինչպես նաև Պալատում հավատարմագրված այլ պետության փաստաբան կարող է Շահառուներին կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրել ինչպես Գրասենյակ դիմելու, այդ նպատակով դիմած անձանց ցուցակում ընդգրկվելու և Գրասենյակից փոխանցված գործերը վարելու միջոցով, այնպես էլ՝ անմիջականորեն:

8. Կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբանը կարող է դիմել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին կամ տնտեսավարող սուբյեկտներին՝ անվճարունակ անձանց անվճարունակության փաստն ստուգելու, ինչպես նաև անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով: Նշված մարմիններն ու տնտեսավարող սուբյեկտները պարտավոր են հնգօրյա ժամկետում անհատույց տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) կամ դրանց պատճենները, բացառությամբ, երբ պահանջվող փաստաթղթերն օրենքով պահպանվող գաղտնիք են պարունակում:

9. Կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով Գրասենյակ դիմելու, այդ նպատակով դիմած անձանց ցուցակը վարելու, նրանց գործեր փոխանցելու հարաբերությունները կարգավորվում են անվճար իրավաբանական օգնության տրամադրումը կազմակերպելու մասին կարգով:

ԳԼՈՒԽ 3. ԿԱՄԱՎՈՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍԵԼԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

10. Ֆիզիկական անձի, ներառյալ՝ փաստաբանի համար կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման տարեկան խրախուսելի նվազագույն ժամաքանակը 48 (քառասունութ) ժամն է, որը պետք է տրամադրվի առնվազն 2 (երկու) անձի:

11. Սույն կարգի 10-րդ կետում սահմանված ժամաքանակի մի մասը պետք է ծախսված լինի առնվազն 4 (չորս) իրավաբանական բնույթի փաստաթղթի կազմման համար՝ վարչական մարմնին ուղղված բողոք, դատարանին ուղղված դիմում, հայցադիմում, վերաքննիչ բողոք, վճռաբեկ բողոք, դրանց պատասխան (առարկություն) կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի վարութային ակտի դեմ բողոք:

12. Փաստաբանի դեպքում կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրման տարեկան խրախուսելի նվազագույն ժամաքանակի մի մասը պետք է ծախսված լինի մեկ կամ մի քանի վարչական, դատական կամ մինչդատական քրեական վարույթի շրջանակում առնվազն 4 (չորս) ժամ ներկայացուցչություն (պաշտպանություն) ապահովելու համար:

13. Փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից կազմակերպվող կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման ծրագիրը պետք է ներառի տարեկան առնվազն 3 (երեք) անձի իրավաբանական խորհրդատվության տրամադրում **(1-ին բաղադրիչ)**, առնվազն 6 (վեց) իրավաբանական բնույթի փաստաթղթերի կազմում՝ վարչական մարմնին ուղղված բողոք, դատարանին ուղղված դիմում, հայցադիմում, վերաքննիչ բողոք, վճռաբեկ բողոք, դրանց պատասխան (առարկություն) կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի վարութային ակտի դեմ բողոք **(2-րդ բաղադրիչ)**, ինչպես նաև մեկ կամ մի քանի վարչական, դատական կամ մինչդատական քրեական վարույթի շրջանակում առնվազն 6 (վեց) ժամ ներկայացուցչության (պաշտպանության) իրականացում **(3-րդ բաղադրիչ)**: Չորս և ավելի փաստաբան աշխատակից ունեցող՝ փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպության կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման ծրագիրն առնվազն պետք է ներառի սույն կետում նշված բոլոր բաղադրիչները՝ յուրաքանչյուր բաղադրիչի համար սահմանված նվազագույնի կրկնակի չափով:

ԳԼՈՒԽ 4. ԿԱՄԱՎՈՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

14. Փաստաբանը և կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման ծրագիր իրականացրած փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունը, որը սույն կարգի 3-րդ գլխով սահմանված նվազագույն չափանիշներին համապատասխան (չափով) կամավոր անհատույց իրավաբանական օգնություն է տրամադրել Շահառուներին, կարող է յուրաքանչյուր տարի մինչև հաշվետու տարվան հաջորդող մարտի 1-ը Պալատի նախագահին

ներկայացնել նախորդ տարվա ընթացքում իր կողմից կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու դեպքերի (տրամադրված գործերի) վերաբերյալ հաշվետվություն **(այսուհետ՝ Հաշվետվություն)**:

15. Հաշվետվությունը ներկայացվում է սույն կարգի հավելված 1-ով սահմանված ձևին համապատասխան և պետք է պարունակի առնվազն հետևյալ տվյալները.

1) փաստաբանի անունը, ազգանունը և արտոնագրի համարը, իսկ փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպության դեպքում՝ անվանումը, փաստաբան աշխատակիցների անունները, ազգանունները և արտոնագրերի համարները,

2) կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու ընդհանուր ժամաքանակը.

3) կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու դեպքերի քանակը,

4) կամավոր անհատույց իրավաբանական օգնություն ստացած անձանց տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը կամ հաղորդակցության այլ միջոցի վերաբերյալ տեղեկատվությունը).

5) տեղեկություններ վստահորդի՝ Օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված անձ հանդիսանալու վերաբերյալ՝ կարգավիճակը հաստատող փաստաթղթի տվյալների նշմամբ (նշման առկայության դեպքում),

6) կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու դեպքերի նկարագրություն՝ ըստ ուղղվածության և բնույթի,

7) յուրաքանչյուր դեպքով կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման շրջանակներում իրականացված գործունեության տեսակները՝ դրանց վրա ծախսված ժամաքանակի նշմամբ.

8) նշում այն գործերի վերաբերյալ, որոնք փոխանցվել են Գրասենյակի կողմից,

9) հաշվետու տարվա ավարտի դրությամբ վարած գործերի ավարտված կամ ընթացիկ լինելու մասին տեղեկատվություն:

16. Հաշվետվությանը կից ներկայացվում է անհատույց իրավաբանական օգնություն ստացած Շահառուի անձը և Օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգավիճակը հաստատող փաստաթղթերի պատճենները:

17. Հաշվետվությունը կարող է ներկայացվել ինչպես առձեռն կամ փոստային առաքմամբ, այնպես էլ էլեկտրոնային եղանակով՝ փաստաբանի կողմից Պալատին տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեից Պալատի պաշտոնական (info@advocates.am) էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով:

18. Հաշվետվությունը ներկայացվում է ստորագրված վիճակով:

19. Փաստաբանը պատասխանատու է Հաշվետվությունում հավաստի և ամբողջական տվյալներ ներկայացնելու համար:

20. Գրասենյակի մոնիթորինգի պատասխանատուները հաշվետու տարվա հաջորդ տարվա մարտի 1-ից մինչև ապրիլի 15-ը ստուգում են Պալատ ներկայացված Հաշվետվությունների հավաստիությունը:

21. Հաշվետվությունների հավաստիության ստուգման հետ միասին՝ Գրասենյակի մոնիթորինգի պատասխանատուները ստուգում են նաև Հաշվետվություն ներկայացրած փաստաբանի կամ փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպության կողմից սույն կարգի 3-րդ գլխով սահմանված նվազագույն

չափանիշներին համապատասխան (չափով) կամավոր անհատույց իրավաբանական օգնություն ցուցաբերված լինելու հանգամանքը:

22. Հաշվետվությունների ստուգման աշխատանքները կազմակերպում և համակարգում է Պալատի նախագահի տեղակալը:

23. Հաշվետվության հավաստիությունը ստուգելու նպատակով Գրասենյակի մոնիթորինգի պատասխանատուն՝

1) ուսումնասիրում է Հաշվետվությանը կից ներկայացրած փաստաթղթերը՝ հավաստիանալու համար կամավոր անհատույց իրավաբանական օգնություն ստացած անձի՝ Օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգավիճակն ունենալու հանգամանքը,

2) կարող է ուսումնասիրել տեղեկատվության հրապարակային աղբյուրներում (օրինակ՝ դատական տեղեկատվական համակարգում) առկա տվյալները՝ Հաշվետվության մեջ նշված իրավաբանական օգնության դեպքի վերաբերյալ,

3) կարող է Հաշվետվություն ներկայացրած անձից պահանջել ներկայացնել հավելյալ փաստաթղթեր,

4) կարող է կապ հաստատել կամավոր անհատույց իրավաբանական օգնություն ստացած անձի, ինչպես նաև համապատասխան վարույթն իրականացրած պաշտոնատար անձանց կամ նրանց աշխատակազմերի հետ և ստանալ տեղեկատվություն տրամադրված իրավաբանական օգնության առնչությամբ,

5) Գրասենյակի կողմից փոխանցված գործերի առնչությամբ կարող է տեղեկատվություն պահանջել և ստանալ Գրասենյակի աշխատակազմից,

6) կարող է ձեռնարկել օրենքով և Պալատի ներքին իրավական ակտերով չարգելված այլ միջոցներ:

24. Հաշվետվությունում առկա տվյալների ամբողջականության առնչությամբ նկատառումներ ունենալու դեպքում Գրասենյակի մոնիթորինգի պատասխանատուն իրավունք ունի Հաշվետվությունը ներկայացրած անձից պահանջել բացատրություններ և առաջարկել շտկել թերությունները:

25. Հաշվետվությունում առկա տվյալների հավաստիության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում Գրասենյակի մոնիթորինգի պատասխանատուն Հաշվետվությունը ներկայացրած անձից պետք է բացատրություն պահանջի:

26. Հաշվետվություն ներկայացրած անձը պարտավոր է Գրասենյակի մոնիթորինգի պատասխանատուի պահանջով 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել բացատրություններ, տրամադրել Հաշվետվության մեջ ներառված իրավաբանական օգնությանն առնչվող փաստաթղթեր, ողջամիտ ժամկետում շտկել Հաշվետվության թերությունները:

27. Հաշվետվությունում առկա տվյալների հավաստիության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում Գրասենյակի մոնիթորինգի պատասխանատուն պարտավոր է ձեռնարկել բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները կասկածը հերքող կամ հաստատող հավաստի տվյալներ հավաքագրելու ուղղությամբ:

28. Հաշվետվությունների (Հաշվետվության) ստուգման արդյունքներով մինչև հաշվետու տարվա հաջորդ տարվա ապրիլի 20-ը Գրասենյակի մոնիթորինգի պատասխանատուն (պատասխանատուները) համապատասխան զեկուցագիր է (են) ներկայացնում Պալատի նախագահի տեղակալին:

29. Սույն կարգի 28-րդ կետում նախատեսված զեկուցագիրը պետք է պարունակի տեղեկություններ ոչ միայն Հաշվետվությունների (Հաշվետվության) հավաստիության

ստուգման արդյունքների, այլև Հաշվետվություն ներկայացրած փաստաբանի կամ փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպության կողմից սույն կարգի 3-րդ գլխով սահմանված նվազագույն չափանիշներին համապատասխան (չափով) կամավոր անհատույց իրավաբանական օգնություն ցուցաբերված լինելու հանգամանքի վերաբերյալ, ներառյալ՝ յուրաքանչյուր չափանիշի (բաղադրիչի) մասով տվյալներ:

30. Հաշվետվությունների ստուգման արդյունքում Գրասենյակի մոնիթորինգի պատասխանատուի (պատասխանատուների) կազմած զեկուցագրում որևէ Հաշվետվության՝ առերևույթ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական լինելու վերաբերյալ տվյալներ լինելու դեպքում զեկուցագիրն այդ մասով ներկայացվում է Պալատի նախագահին՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար:

ԳԼՈՒԽ 5. ԿԱՄԱՎՈՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

31. Կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը խրախուսելու նպատակով Պալատը վարում է սույն կարգի 3-րդ գլխով սահմանված նվազագույն չափանիշներին համապատասխան կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրած փաստաբանների և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ցուցակ **(այսուհետ՝ Ցուցակ)**:

32. Ցուցակը վարում է Պալատի աշխատակազմի ղեկավարը՝ էլեկտրոնային եղանակով:

33. Եթե Հաշվետվությունների ստուգման արդյունքներով Գրասենյակի մոնիթորինգի պատասխանատուի (պատասխանատուների) կազմած զեկուցագրով հաստատվում է, որ Հաշվետվություն ներկայացրած փաստաբանը կամ փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում սույն կարգի 3-րդ գլխով սահմանված նվազագույն չափանիշներին համապատասխան (չափով) տրամադրել է կամավոր անհատույց իրավաբանական օգնություն (իրականացրել է կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման ծրագիր), ապա Պալատի նախագահի տեղակալն այդ մասին տեղեկացնում է Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան փաստաբանին կամ փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունը Ցուցակում ներառելու համար:

34. Հաշվետվություն ներկայացրած փաստաբանը կամ կազմակերպությունը չի ներառվում Ցուցակում, եթե՝

1) հաշվետու տարվա ընթացքում սույն կարգի 3-րդ գլխով սահմանված նվազագույն չափանիշներին համապատասխան չի տրամադրել է կամավոր անհատույց իրավաբանական օգնություն (չի իրականացրել կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման ծրագիր),

2) Հաշվետվությունը չի պարունակում անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը և Հաշվետվություն ներկայացրած անձն այն չի շտկել Գրասենյակի մոնիթորինգի պատասխանատուի առաջարկով,

3) Հաշվետվություն ներկայացրած անձը հրաժարվել է Գրասենյակի մոնիթորինգի պատասխանատուին տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, այդ թվում՝ փաստաթղթերը,

4) Հաշվետվության հավաստիության վերաբերյալ առկա է հիմնավոր կասկած:

35. Ցուցակում ներառված յուրաքանչյուր փաստաբանի կամ փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպություն դիմաց լրացվում է հաշվետու տարվա ընթացքում կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու ընդհանուր ժամաքանակը, դեպքերի քանակը, իրականացված գործունեության տեսակները՝ ըստ քանակների և ժամաքանակների:

36. Պալատի նախագահի տեղակալից ստանալով տեղեկություններ ստացված բոլոր Հաշվետվությունները ստուգված լինելու մասին՝ Պալատի աշխատակազմի ղեկավարը՝ մինչև հաշվետու տարվա հաջորդ տարվա մայիսի 1-ն ամփոփում է Ցուցակը և այն ներկայացնում Պալատի նախագահին:

ԳԼՈՒԽ 6. ԿԱՄԱՎՈՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ

37. Պալատի աշխատակազմի ղեկավարից ստանալով սույն կարգի 3-րդ գլխով սահմանված նվազագույն չափանիշներին համապատասխան կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրած փաստաբանների և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ամփոփ Ցուցակը՝ Պալատի նախագահը հանձնարարում է՝

1) Պալատի վերապատրաստման հարցերով համակարգողին՝ Ցուցակում ընդգրկված փաստաբաններին՝ որպես վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունից ընթացիկ տարվա ընթացքում ազատված փաստաբան հաշվառելու համար, բացառությամբ՝ մասնագիտական էթիկա (դեոնթոլոգիա) դասընթացին, արտոնագիրը վերականգնած փաստաբանի կողմից վերապատրաստման դասընթացներին և որպես կարգապահական տույժ նշանակված վերապատրաստման դասընթացներին,

2) Պալատի համապատասխան աշխատակցին՝ Պալատի պաշտոնական կայքում հրապարակել Ցուցակը:

38. Պալատի աշխատակազմի ղեկավարից ստացված ամփոփ Ցուցակը Պալատի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ Պալատի նախագահի տեղակալը 10 օրյա ժամկետում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ նախարարության պաշտոնական կայքում հրապարակելու համար:

39. Ամփոփ Ցուցակում ընդգրկված փաստաբաններին և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպություններին, տրամադրված կամավոր անհատույց իրավաբանական օգնության ծավալի և բնույթի հաշվառմամբ, Պալատի նախագահը կարող է խրախուսել Պալատի կանոնադրությամբ սահմանված եղանակներով:

40. Պալատի նախագահի որոշմամբ կարող են սահմանվել կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը խրախուսելուն ուղղված ծրագրեր:

* * *

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
13.01.2023թ. թիվ 2/11-Լ որոշման

Պալատի խորհրդի նախագահ՝
_____ Սիմոն Բաբայան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԿԱՄԱՎՈՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հաշվետու տարին՝ _____
2. Հաշվետվություն ներկայացնող անձ՝ *(նշվում է փաստաբանի անունը, ազգանունը և արտոնագրի համարը, փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպության դեպքում՝ անվանումը, փաստաբան աշխատակիցների անունները, ազգանունները և արտոնագրերի համարները)*
3. Կամավոր անհատույց իրավաբանական օգնության (ԿԱԻՕ) տրամադրման ընդհանուր ժամաքանակը՝ _____
4. Հանրային պաշտպանի գրասենյակից փոխանցված գործերը՝ ըստ ցուցակի համարի՝ (*նշվում է գործերի համարները*),
5. ԿԱԻՕ տրամադրելու դեպքերի քանակը՝ _____, որից հաշվետու տարվա ավարտին՝ _____ ընթացիկ, _____ավարտված:

N	**Շահառուի տվյալները (ԱԱՀ, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ,)**	**Շահառուի կոնտակտային տվյալները (բնակության հասցե, հեռախոսա-համար, էլ. փոստ և այլն)**	**Շահառուի կարգավիճակը՝ ըստ «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի (կարգավիճակը հաստատող փաստաթղթի տվյալները)**	**Վարված գործի ուղղվածությունը (քրեաիրավական, քաղաքացիա-իրավական, վարչա-իրավական) և բնույթը**	**ԿԱԻՕ-ի շրջանակում իրականացված գործողությունները՝ ծախսված ժամաքանակի նշմամբ**	**գործի վիճակը (ընթացիկ կամ ավարտված)**
1.	2.		3.	4.	5.	6.

1.	օրինակ՝ Պողոս Պողոսի Պողոսյան (անձնագիր՝ AA12345678 տրվ. 001-ի կողմից 01.01.2020թ.)	օրինակ՝ հասցե՝ ք. Երևան, Նկարիչների փող., 16շ., բն. 5, հեռ.՝ 092-12-34-56 էլ. հասցե՝ poghos@mail.com	օրինակ՝ 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձ (վկայական՝ համար 1586, տրվ. 01.01.2020թ.)	օրինակ՝ քաղաքացիա-իրավական՝ ամուսնա-ընտանեկան վեճ	օրինակ՝ բանավոր խորհրդատվություն՝ 1 ժամ, արտադատական կարգով վեճը լուծելու մասին գրության կազմում՝ 0.5 ժամ, հայցադիմումի կազմում՝ 3 ժամ, դատական ներկայացուցչություն՝ 8 ժամ, միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքի կազմում՝ 4 ժամ:	օրինակ՝ ընթացիկ